ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-ՀՓ/16-01 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հունվարի 22-ին կնքված թիվ PD-64-01-16 և PD-74-01-16 պայմանագրերում 2016թ-ի դեկտեմբերի 09-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրերով նախատեսված ծառայությունների ծավալների ավելացում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանգրերի գնի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 60-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ -:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 4

22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-64-01-16

Փոստային կապի, փոստային կապի հետ կապված
սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «09-ը» դեկտեմբերի, 2016թ.

«ՀԱՅՓՈՍ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և **Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Ավագյանի,** մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 22.01.2016 թ.-ին կնքված թիվ PD-64-01-16 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո **«13 318 100 (տասներեք միլիոն երեք հարյուր տասնութ հազար մեկ հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել **«17 118 100 (տասնյոթ միլիոն հարյուր տասնութ հազար մեկ հարյուր)** ԱԱՀ-ն» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 22.01.2016թ- ին կնքված թիվ PD-64-01-16 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4.Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

---------- Հ.Ավագյան

Հաճախորդ՝

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
ք.Երևան, Նազարբեկյան թաղ. 40
ՀՀ 900051407030
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02583241
Հեռ. /010/39-24-25

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Ա. Ավագյան

Համաձայնեցված է՝

Գործադիր խորհրդի անդամ՝ ----------Ա.Աբրահամյան

Հատուկ հաճախ.սպաս. բաժնի ղեկավար՝ ----------Հ.Սարգսյան

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-74-01-16
Փոստային ծառայությունների վճարովի մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «09-ը» դեկտեմբերի 2016թ.

«ՀԱՅՓՈՍ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և **Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Բազիկյանի**, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-74-01-16 Փոստային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 3.2 կետով «սահմանվում է» բառից հետո **«10 051 900 (տաս միլիոն հիսունմեկ հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել **«12 551 900 (տասներկու միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-74-01-16 Փոաստային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4.Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող (4) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

---------- Հ.Ավագյան

Հաճախորդ՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր
իրավասության դատարանի աշխատակազմ
ք.Գավառ, Սայադյան 18
ՀՎՀՀ 02583241
Գավառի ՏԳԲ
ՀՀ 900171095020
Հեռ.՝ (0264) 2-40-60

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Ա.Բազիկյան